

Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև
համագործակցության շրջանակներում իրականացվող Դպրոցների սեյսմիկ
անվտանգության բարելավման ծրագրի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 797-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը, որի շրջանակներում մինչև 2030 թվականը պետք է ամրացվեն կամ նոր կառուցվեն թվով 377 դպրոցներ: Ծրագրի իրականացման համար ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1426-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրից բխող 2015-2020 թվականների միջոցառումների ծրագիրը, որի 1.1 կետի համաձայն պետք է հաստատվի ուժեղացվող և նոր կառուցվող դպրոցների 46 գերակա շենքերի ցանկը:

2015 թվականի հոկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) միջև ստորագրվել է «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - Արդյունքների վրա հիմնված փոխատվություն» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), որի համար հիմք է հանդիսացել 2015 թվականի հունիսի 30-ի ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության, Ասիական զարգացման բանկի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջև ստորագրված P49078-ARM. «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր» եռակողմ փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր), որի 6-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությունը դպրոցների ընտրությունն իրականացրել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի օժանդակությամբ մշակված գերակայություններին համապատասխան:

Ծրագրի նպատակն է Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի (այսուհետ ՍԱԲԾ) շրջանակում ՀՀ 1400 դպրոցներից առաջնահերթ համարվող թվով 377 դպրոցների ուժեղացումը կամ նորի կառուցումը: Վերջիններս

համարվում են սեյսմիկ անվտանգության տեսակետից բարելավման անհրաժեշտություն ունեցող առաջնահերթ դպրոցներ, որոնց ամրացնելու կամ նորը կառուցելու պարագայում, որպես Ծրագրի վերջնական արդյունք կապահովվի սեյսմակայուն դպրոցների շենքերի բարելավված տեսակարար կշիռը:

Ծրագիրն ունի 3 հիմնական արդյունքների ոլորտներ՝

(i) Արդյունքների ոլորտ 1. Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում.

(ii) Արդյունքների ոլորտ 2. Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում.

(iii) Արդյունքների ոլորտ 3. Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում.